ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 52/11

Քաղ.Երեւան **23 նոյեմբերի 2011թ.**

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաեւ բողոքարկման խորհուրդ) հետեւյալ կազմով՝ խորհրդի նախագահ՝ Ա.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս. Խաչիկյան, Ա. Բաբայան, Ա. Հ. Աբգարյան Ա.Գ. Շահինյան եւ Ա.Ի.Ղարիբջանյան (քարտուղար), իր 2011թ. նոյեմբերի 23-ի նիստում (արձանագրություն N 7.6) քննարկեց «Ոսկեվազի գինու գործարան» ընկերության կողմից 2011թ. հոկտեմբերի 19-ին ներկայացված «ԳԻՆԵՏՈՒՆ» (հայտի համարը՝ N 20110436) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Մերժման հիմք են հանդիսացել «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը և «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու կարգի» (այսուհետ կարգ) 90-րդ մասի 30-րդ ենթակետը, համաձայն որոնց «որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը ծառայում է ապրանքի այլ բնութագրերը նշելու համար: Հայտարկված «ԳԻՆԵՏՈՒՆ» բառային ապրանքային նշանը չի գրանցվել, քանի որ «գինետունը» դա գինի վաճառելու և տեղում խմելու հաստատություն է:

Բողոքարկողը խնդրել է, հիմք ընդունելով «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 1–ին և 5-րդ մասերը, վերանայել ապրանքային նշանների բաժնի փորձաքննությունների որոշումը և գրանցել հայտարկվող «ԳԻՆԵՏՈՒՆ» ապրանքային նշանը հայտարկվող բոլոր ապրանքների համար:

Կոլեգիայի քննարկման արդյունքները ներկայացնելիս նշվեց, որ 2011թ. հոկտեմբերի 10-ին «Ոսկեվազի գինու գործարան» ընկերության կողմից բողոք է ներկայացվել «ԳԻՆԵՏՈՒՆ» (հայտի համարը՝ N 20110436) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման վերաբերյալ: Համառոտ նշվեց բողոքի բովանդակությունը և կոլեգիայի այն կարծիքը, որ կարելի է գրանցել «ԳԻՆԵՏՈՒՆ» ապրանքային նշանը հայտարկված ապրանքների համար:

Ընդհանուր քննարկման արդյունքում, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման կարգի» 68-րդ կետի 1-րդ ենթակետով բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Չեղյալ ճանաչել հայտարկված ապրանքային նշանի կրկնական փորձաքննության մասին որոշումը ամբոջությամբ և բավարարել «Ոսկեվազի գինու գործարան» ընկերության բողոքը՝ գրանցելով «ԳԻՆԵՏՈՒՆ» (հայտի համարը՝ N 20110436) բառային ապրանքային նշանը հայտարկված դասի համար:

Բողոքարկման խորհրդի
նախագահ Ա. Ազիզյան